ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի 17.05.2024թ. թիվ 36 որոշմամբ

Տնօրեն (ռեկտոր)՝ Ռուստամ Սահակյան

Կազմված է «17» 05. 2024թ.,
Բաղկացած է 3 թերթից
Տպագրված է 3 օրինակ
Օրինակ 1

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ

«15» 08 2016թ.
Գրանցման համարը 222.160.924533

ՀՎՀՀ 06902542

«15» 08 2016թ. գրանցված կանոնադրության թիվ 002.03 փոփոխությունը գրանցված իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից
«03» 06 2024թ.

Աշխատակից

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ)
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝

49-րդ կետի 9-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

*«9.) շնորհում է գիտական կոչումներ.*

*9.1) իրականացնում է պրոֆեսորադասախոսական համակազմից պրոֆեսորի ընտրությունը՝ ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից հաստատված ներքին իրավական ակտերին համապատասխան.*

*9.2) հաստատում է ֆակուլտետների դեկանների, ամբիոնների վարիչների, պրոֆեսորադասախոսական համակազմի թափուր պաշտոնների տեղակալման մրցույթների արդյունքները.»*

97-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

*«97. Ֆակուլտետի կառավարման կոլեգիալ մարմինը ֆակուլտետի գիտական խորհուրդն է, որի նախագահը ֆակուլտետի դեկանն է: Ֆակուլտետի գիտական խորհրդի կազմում ընդգրկվում են դեկանի տեղակալները, ֆակուլտետի ամբիոնների վարիչները, ֆակուլտետի արհմիության նախագահը, պրոֆեսորներ, դոցենտներ, ավագ դասախոսներ, դասախոսներ, ասիստենտներ, որոշ այլ մասնագետներ, սովորողներ: Ֆակուլտետի գիտական խորհրդի անդամների թվի 25 տոկոսը սովորողներն են, որոնց առաջադրումն ու ընտրությունն իրականացնում է ֆակուլտետի ուսանողական խորհուրդը:»*

99-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3) *սահմանված կարգի համաձայն իրականացնում է ֆակուլտետի դեկանի, պրոֆեսորադասախոսական համակազմից՝ դոցենտի, ավագ դասախոսի, դասախոսի և ասիստենտի ընտրությունը,»*

103-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

*«103. Դեկանը, պրոֆեսորադասախոսական համակազմից դոցենտը, ավագ դասախոսը, դասախոսը և ասիստենտը ընտրվում են ֆակուլտետի գիտական խորհրդում՝ փակ, գաղտնի քվեարկությամբ՝ դեկանը՝ 5 (հինգ), պրոֆեսորադասախոսական համակազմից դոցենտը, ավագ դասախոսը, դասախոսը և ասիստենտը՝ մինչև 5 (հինգ) տարի ժամկետով: Դեկանի, պրոֆեսորադասախոսական համակազմից դոցենտի, ավագ դասախոսի, դասախոսի և ասիստենտի պաշտոնում ընտրված է համարվում ֆակուլտետի գիտական խորհրդում ամենաշատ, բայց առնվազն մասնակիցների ձայների կեսից ավելի ձայներ հավաքած թեկնածուն: Ընտրությունների արդյունքների հիման վրա ՎՊՀ-ի ռեկտորը սահմանված կարգով կնքում է պայմանագիր ընտրված դեկանի հետ 5 (հինգ) տարի ժամկետով, իսկ պրոֆեսորադասախոսական համակազմից ընտրված դոցենտի, ավագ դասախոսի, դասախոսի և ասիստենտի հետ՝ մինչև 5 (հինգ) տարի ժամկետով: Դեկանի և պրոֆեսորադասախոսական համակազմից դոցենտի, ավագ դասախոսի, դասախոսի և ասիստենտի ընտրությունը կազմակերպվում և իրականացվում է ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից հաստատված ներքին իրավական ակտերին համապատասխան:»*

106-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

*«106. Ամբիոնները (բաժինները, լաբորատորիաները) ֆակուլտետի ուսումնագիտական գործընթացի կազմակերպման կառուցվածքային հիմնական ստորաբաժանումներն են, որոնք գործում են սույն կանոնադրության և ֆակուլտետների ամբիոնների ու լաբորատորիաների*

*կանոնադրությունների հիման վրա: Ամբիոնի գիտամանկավարժական կազմում ընդգրկվում են պրոֆեսորները, դոցենտները, ավագ դասախոսները, դասախոսները և ասիստենտները:»*

117-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

*«117.ՎՊՀ-ի կոլեկտիվը կազմում են աշխատողները՝ պրոֆեսորները, դոցենտները, ավագ դասախոսները, դասախոսները, ասիստենտները, դոկտորանտները, ասպիրանտները, գիտական, վարչական և այլ աշխատողներ:»*

118-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

*«118. ՎՊՀ-ի աշխատողները բաժանվում են գիտամանկավարժական (պրոֆեսորադասախոսական համակազմ (ամբիոնի վարիչ, պրոֆեսոր, դոցենտ, ավագ դասախոս, դասախոս, ասիստենտ), գիտական աշխատողներ, վարչական, ուսումնաօժանդակ, ինժեներատեխնիկական, սպասարկման և այլ տարակարգերի:»*

37